Տեղեկագիր օգոստոս 2019

0 5 10 20 30 40
Miles

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019Թ. ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. օգոստոս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում I խմբի միկրոօրգանիզմներով հարուցված, հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող հիվանդություններ, դեպքեր չեն արձանագրվել:

Հատուկ վտանգավոր վարակներ

Բրուցելոզ

2019թ. օգոստոսին հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 44 դեպք, որից 21-ը՝ Շիրակի, 1-ը՝ Սյունիքի, 8-ը՝ Արագածոտնի, 4-ը՝ Արարատի, 3-ը՝ Կոտայքի, 1-ը՝ Լոռու, 2-ը՝ Վայոց Ձորի, 4-ը՝ Գեղարքունիքի մարզում:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում 2019-2018թթ հունվարից-օգոստոս ժամանակահատվածում արձանագրված բրուցելոզի դեպքերը ըստ 100.000 բնակչի

Ըստ գծապատկեր 1-ի տվյալների՝ հանրապետությունում 2019թ. օգոստոս ամսվա ընթացքում արձանագրված բրուցելոզի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 2.2 անգամ իսկ 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 2.7 անգամ:

Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:

Օդակաթիլային վարակներ

Գրիպ և Սուր շնչառական վարակ

2019թ. օգոստոս ամսին Հայաստանի Հանրապետության տարածքում սուր շնչառական վարակներով (այսուհետ ՍՇՎ) պայմանավորված հիվանդացության ակտիվություն չի արձանագրվել: ՍՇՎ դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 1.0 անգամ: Ընդհանուր արձանագրված դեպքերի թվի գրեթե 82%-ը կազմում են 0-14 տարեկան երեխաները: 2019թ. օգոստոս ամսվա ընդհանուր ցուցանիշը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.1 անգամ, 2017թ. համեմատ աճել՝ 1.2 անգամ:



Գծապատկեր 2. 2018-2019թթ. հոկտեմբեր – օգոստոս ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների հիվանդացության ցուցանիշն ըստ 100.000 բնակչի

Օգոստոս ամսվա ընթացքում գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 38 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է ադենովիրուսի 1 դեպք, պարագրիպի 3 դեպք, ռինովիրուսի 6 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է ռինովիրուսի 2, ադենովիրուսի 2 դեպք:

Այլ օդակաթիլային վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)

Ջրծաղիկ



Գծապատկեր 3. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ հունվար-օգոստոս ամիսներին արձանագրված ջրծաղկի դեպքերը ըստ 100.000 բնակչի

Ըստ գծապատկեր 3-ի տվյալների՝ 2019թ. օգոստոս ամսին արձանագրված ջրծաղկի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 1.7 անգամ, իսկ 2018թ նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 1.8 անգամ: Ընդհանուր առմամբ արձանագրված դեպքերի 84.1%-ն արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում, մասնավորապես՝ 3-6 տարեկանների շրջանում (56.7%): Առավել շատ դեպքեր արձանագրվել են քաղաքաբնակ բնակչության շրջանում (84.3%), որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Նշված ժամանակահատվածում հղիների շրջանում արձանագրվել է ջրծաղկի 2 դեպք, որոնց մասին տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն:

Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորության սահմաններում առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

Քութեշ



Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ. հունվար-օգոստոս ամիսներին արձանագրված քութեշի դեպքերը ըստ 100.000 բնակչի

Ըստ գծապատկեր 4-ի տվյալների՝ արձանագրված քութեշի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 3.6 անգամ, 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.6 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում, ինչը կազմում է ընդհանուր արձանագրված դեպքերի 55.5%-ը: Դեպքերի մեծ մասը արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում՝ 61.1%, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

Վարակային մոնոնուկլեոզ

Օգոստոս ամսվա ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 26 դեպք, որից 25-ը 0-18 տարեկան երեխաների շրջանում:



Գծապատկեր 5. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019թթ հունվար-օգոստոս ամիսներին արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը ըստ 100.000 բնակչի

Ըստ գծապատկեր 5-ի տվյալների՝ 2019թ. օգոստոս ընթացքում արձանագրված վարակային մոնոնուկլեոզով պայմանավորված հիվանդության դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1.7 անգամ, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ևս՝ 1.7 անգամ:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2019թ. օգոստոս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1583 դեպք, որից 576 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 1007-ը՝ մարզերում: 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան նվազել է: Հունվար – օգոստոս ամիսների ընթացքում աղիքային վարակներով հիվանդացությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նույնպես աննշան նվազել է:



Գծապատկեր 6. Աղիքային վարակների հիվանդացությունը 2018-2019թթ. հունվար– օգոստոս ամիսներին ըստ 100.000 բնակչի

2019թ. հուլիս ամսվա համեմատ 1137 դեպք աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.4 անգամ:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

2019թ. օգոստոս ամսին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է աղիքայինվարակիչ հիվանդությունների 2 բռնկում՝

- ✓ Օգոստոսի 18-23-ն ընկած ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում արձանագրվել է սալմոնելոզի բռնկում՝ 12 տուժածով:
- ✓ Օգոստոսի 30-ին Գյումրի քաղաքի □Դվին□ ռեստորանում տեղի ունեցած հարսանեկան խնջույքի մասնակիցներից 46-ի մոտ արձանագրվել է մանրէային ծագման սննդային թունավորում:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2019թ. օգոստոս ամսին հանրապետությունում

գրանցվել է կապույտ և հարկապույտ հազի 9 դեպք՝ չպատվաստած և թերի պատվաստված անձանց շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը օգոստոս ամսին կազմել է 88% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 92% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 96% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Վիրուսային հեպատիտներ

Հայաստանի Հանրապետությունում օգոստոս ամսին արձանագրվել է սուր վիրուսային հեպատիտի 2 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը նվազել է 2 անգամ:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում օգոստոս ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 36.8%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 63.2%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 37.2%-ը արձանագրվել է թունավոր կենդանիների խայթոցի արդյունքում, 21.6%-ը՝ դեղամիջոցներով թունավորման արդյունքում (ինքնաբուժման և ծնողի անուշադրության հետևանքով), 17.8%-ը՝ ալկոհոլային թունավորման արդյունքում (ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից), 3.5%-ը՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 13.8%-ը՝ օրգանական լուծիչների և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 4.4%-ը՝ թունաքիմիկատների, 0.8%-ը՝ բույսերի թունավոր ազդեցությունից, 0.45%-ը՝ թմրանյութի, 0.45%-ը՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2019թ. օգոստոս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.2 անգամ:

Մակաբուծային հիվանդություններ

Հանրապետությունում 2019թ. օգոստոս ամսին մալարիայի, լեյշմանիոզի և Լայմի հիվանդության դեպքեր չեն արձանագրվել:

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում օգոստոս ամսին սննդային թունավորման դեպքեր չեն արձանագրվել:

Կատարող՝ Աննա Աղաջանյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ